

կը հաստատէ մեր ենթագրութիւնը թէ ասոր արեւ-
դակնանման նշանագիրը ուրիշ բան չէ, բայց եթէ
ճ գրին մէկ ձեւակերպութիւնը:

Դ. Յիշենք վերջապէս թէ մէկ քանի բառեր
ալ՝ որոնք նախորդ ցուցակներուն մէջ կանոնաւոր
փակագրութիւններ կը կազմեն, հոս բոլորովին այ-
լանդակուած ու անհասկանալի բան մը գարձած
են. այսպէս են սորտունք (T), նորտէրուն (եդ), որ-
տէ (թ).

Այս բոլոր փոփոխութիւնները ի նկատի ու-
նենալով՝ կը տեսնենք որ նոր ցուցակիս հրատա-
րակութեամբն նշանագրերու ընդհանուր թիւն է 509
(Հաշուելով սանդուխ բառը իբր մէկ նշանագիր), որ
կը համապատասխանէ 402 բառերու կամ գաղա-
փարներու. Ասոնցմէ

Ծառերէ յառաջացած նշանագրեր	332
† Պատկերագրեր	32
— Օտար աստղաբաշխական նշաններ .	21
* Ծագումն անձանօթ	124
Գումար	509

Ուսումնափրութեանս մէջ ըստած էինք թէ
նշանագրերու հնագոյն հրատարակութիւնը, որչափ
մեզ ծանօթ է, Էմինին է, Վերջերս մեր ձեռքն ան-
ցաւ Միհթար Արքայի «Քերականութիւն գրաբառի
լեզուի հայկազն» սեռի (Ալեքսիկ 1730, Բ. տպ.
1770), որը էջ 481 հրատարակուած գտանք 46
նշանագրերու ցուցակ մը: Ասիկա համեմատելով
մեր ցուցակին հետ սորութիւն մը չի պարունակեր,
բայց անշուշտ հնագոյն հրատարակութիւնն է բո-
լոր ցուցակներու մէջ:

Ամենավերջին հրատարակութիւնը եղաւ Շո-
ղակաթի մէջ, որ լուսանկարով նմանահանուած
կարեւոր էր ճշտելու համար նշանագրերու ծաղման
ժամանակը: Գարեգին վարդապետի տեղեկութիւն-
ներէն կերեւայ որ (Շող., էջ 214) այս երկու ձե-
ներին պարբեր անթուական են: բայց Գ. արեգին
ու ապիքինին թուականը կը գնէ Ժ. Գ. գարու վեր-
ջը եւ Ժ. Գ. գարու սկիզբը, իսկ երկրորդը թերեւս Ժ. Ը.
Գար վագիրն շատ ուշ ըլլալով՝ նշանակութիւն
չունի: բայց առաջինը շատ մեծ նշանակութիւն
ունի: Արդարեւ մեր ունեցած ձեռագրերը կը հաս-
նէին մինչեւ 1564 թիւը: բայց կ'ենթագրէինք որ
նշանագրերու առաջին գործածութիւնը Ժ. Գ. գարէն
ըլլայ: Եթէ ճիշտ է Գ. արեգին վարդապետի տուած
թուականը, այն ժամանակ պէտք կ'ըլլայ այսն թիւը
քիչ մ'ալ առաջ տանիլ, բայտ որում նոյն ձեռա-
գրիներուն մէջ գտնուած նշանագրերը բաւական
մաշուած ձեւեր են եւ աւելի հին սկզբնաւորութիւն
մը կ'ենթագրեն:

Հ. Յ. Ամսլուն



ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԸԼՈՉԱՆՆԵՐ

առ — առուակ: — ւ — լին: — ւշ — լեռնաշղթայ:

(Ծարումակութիւններ)

Բ.

Բայրուրդ կամ Սմբատաւան:

Մասսատ վտակը ձախից Մադէն առ-ը
և աջից Գեօր առուն լնդունելուց յետոյ ան-
սանուամ է ձորոխ կամ ինլար ձորոխ և
ընթացքը փոխում է դէպի հիւսիսարեւմուտք:
Մադէն առ-ը բղխում է Կրմըզը լ-րից, հո-
սում է դէպի հիւսիս, ոսոգում է նախ կիլ և
ապա Մադէն գեղի հանգերը: Մրանից քիչ
ցած Ակրարա լ-րից իջնում է Զեփէ առ-ը,
ոսոգում է Զեփէի և Մանույի հանգերը և
ձախից խառնուում է ձորոխին: Ակխով լեռ-
ներից դէպի հիւսիս է իջնում կոպիս առ-ը,
որի ակունքը Քրքլար-Զիարէքի (Քառասուն
դից ուխտատեղին) է, որը ոսոգում է Լի-
պանա, Խարսի, կոպիս գեղերի հանգերը և
Քրիստափորի վանիքը ու խառնուում է ձախից
ձորոխին: ձորոխը դէպի հիւսիս ուղղուած
ընդունում է կուրուջա և Առիւծիա առու-
ները, իսկ աջից Գոմ առուն և ապա անց-
նելով Բայրուրդի զաշտը՝ ոսոգում է քա-
ղաքն ու շրջակայքը:

Բայրուրդի զաշտը, քաղաքի շրջակայքը
4—5 վերստ երկարութեամբ հարաւից հիւսիս
և քիչ նեղ արեւելքից-արեւեմուտք, այնպիսի
զեղեցիկ տեսարաններ ունի, որ այցելուին
դրաւում յափշտակում է: Շուրջն ամէն ինչ
գալար է պարտէզներ, այդեստաններ և բան-
ջարանոցներ: գալարի թանձրութիւնը այն-
քան խիտ է, որ ձորոխն էլ կանանչ է երեւում:
2000 աւելի տուն բնակչութիւնը իր բոլոր
ջանքը դրած՝ զարգարել, աճեցրել, զրախտի
է վերածել քաղաքի շրջապատք: Տարուայ
ո՛ր եղանակին էլ մտնէք Բայրուրդ, բնու-
թիւնը այնքան առատար է օժտելնրան, որ
միշտ զմայլելի տեսարաններ կ'ունենաք:
Բայրուրդը շինուած է լերան լանջին՝ որը
շրջապատուած է երեք կողմից լեռներով,
որոց մէկի վրայ շինուած է բերդ-միջնա-
բերդը, իր բարձր պարիսպներով, որոնք շի-
նուած են կարծը և որբատաշ քարերով ու

կրաչազախով։ Այս բերդը՝ որ շատ հին անցեալ ունի, յայտնի է հին դարերի պատմագիրներին Բարերատոն անունով, այսօր աւերակ եւ անբնակ է։ Ո՛չ միայն իսլամի իշխանութեան շրջանում վերանորոգուած են նրա պարիսպներն ու զօրանոցները, իշխանական ապարանքն ու մթերանոցները, այլեւ այդ տեղ աշխատել են բիւզանդական ստրատեգաների, Հռոմէական կոնսուլների, Պարթեւ-Արշակունիների եւ Բագրատունիների ծրագրով դարձար վարպետներ, որոնց իւլիաքանչիւր շրջանից մնացորդները նկատելի կերպով իւրաքից տարբերուած են։ Նոյն իսկ այդ տեղ Ուրարտացիներից հազարաւոր տարի առաջ շինուած են եղել աչքաղաքան ամբողջներ։

Ինչպէս աւերակ է բերդն իր գղեակով,
այդպէս էլ աւերակ է քաղաքն իր շուկայով,
ուր 3-400 խանութւոր կայ, բայց ժողովուրդն
այնքան աղքատ է, որ ոչինչ չի գնում, այլ
առուտուրը միայն արտահանութիւնն է:
Ամէն կողմից չում նիւթերը-միրդ, մորթի,
եղ, պանիր, բուրդ եւ ուրիշ առարկաներ
կուտակում, Տրապիզոն են ուղարկում, որ
փող ստանան եւ պետական հարկերը վճարեն:
Քաղաքում էլ քրիստոնեայ Հայ չկայ, չքա-
ցել են արհեստաւորները, չունին հագուստ,
նոյն իսկ քօշ կարող չկայ, չիւն ու որմնա-
դիր, որ վերանորոգէ եւ բլուածներն էլ չեն
շինուում: 400 տուն Հայերից, չորս հինգ
տուն էլ չթողին, որ գերձակ կամ զարրին
ունենան: Ինչպէս բերդն ու քաղաքը, նոյն-
պէս գեղերն ու գաւառը իրենց ունեցած կոր-
ծանուած վանքերով, տաճարներով եւ բնա-
կարաններով այնպիսի վիճակի մէջ են, որ
կարծես թէ՝ հոգեվարք են քաշում:

Բայրութի հմուտ արհեստաւոր եւ անձ
նավատահ զաւակները, ինչպէս քաղաքից
նոյնպէս եւ գեղերից պարբերաբար Կ.Պոլիս
եւ ուրիշ տեղեր զաղթելով, պանդխտելով՝
ցրուեցան, յաջորդներ եւ արհեստագէտ ժա-
ռանգործներ չթողին։ Բայրութի ժողո-
վուրդն էլ Հովտիկի նման ընիկ է, իսլամն
ընդունած եւ թրքախօս, նախկին ոստանիկ-
ազատական սերնդից։ Ինչ որ ասացինք
Հովտիկի մասին, կրկնելու կարիք չկայ։

Ճորտիկ աջ ափին գտնւում են Ուրու-
մելի, Ալբշկա, Վանեք, Թառուկ (Հաւուկ), Խո-
փուր, Խայէկ, Քարաեր, Տանձոս և Իշրուսո
զեղերը, որոնց միջից անցնում են Համահուն

վտակներն ու սոսպում են այդ գեղերի հանդերը։ Իսկ ձախ ափից միանում է Բալախոռ վտակը։ Վերջին միջազգային պատերազմից առաջ Ալմշկա, Առիւծկա, Աւերակ (Կվերեկ), Լուսհոնդ կամ Լուչոնք, Խայիկ, Սղբը-ջիկ գեղերը Հայեր էին ապրում, որոնցից այսօր միայն աւերակներ են մնացել։

9.

Յալախոս եւ Աիւնուր դաշտ :

Բայրութից սկսած ձորոխը թեքում է դէպի հիւսիս արեւմուտք, մինչեւ Բալախոսի վասակի խառնումքը։ Բալախոսի աւանը ձԱ-ի ամենա-արեւմտեան-հարաւային ծայրն է կազմում, շրջապատուած է հարաւից Սպար-ջակ¹, Օթլուկ, Ակրունգար, Կարաղաչ, Զո-րոգմա, Վավուկ և Զիարէթ լեռներով, որոնք Եփրատ և Կալկիթ գետերի և Բալա-խոսի վասակի ջրբաժան գիծերն են կազմում։

Բալախոս վատկը բազմաթիւ առուակ-
ներից է կազմուած, որոնք սոսպում են ամ-
րող աւագանք: Արեւելեան-հարաւի կողմից
Ակ-բարտ լեռներից դէպի հիւսիս է իջնում
Վարչին առուակը, որը սոսպում է մեծ եւ
փոքր Կշռակ, Բենեա, Կալիսկավար, Վա-
րիժնա, Տանիշման, Վարդական, Հնձաւերակ
դէղերի հանգերը, ապա միանում է Հինգի
առուին: Ակսովի լեռներից բղիսում է եւ
դէպի հիւսիս ուղղուում Հինգի առուակը
Վարչին առուի հետ զուգընթացաբար եւ
սոսպում է Մագերա, Խոյս, Զիւզուգէ,
Դիւտեր, Խաշիկ, Քելեվերիկ, Հինդի, Հին-
դիխան, Սինկարոս, Կուշկուրի, Զենիսինիս
եւ Մանաս դէղերը: Հինգի առուի Բիւշտի
առուն սոսպում է Սեղիի, Պլուրակ, (Բլու-
րակ) եւ Բիւշտի դէղերը, նոյնպէս Ճափից
միանում է Զելար առուն, սոսպելով Սարա-
ջիլ եւ Զիլայ դէղերը: Լոոի առուակը բղիսում
է Ակբանզար լշ-ից ու 7600' բարձրութիւ-
նից, անցնում է սոսպելով Գլու-Անահիտ՝
դէղից, մտնում է լոոի զաշտր, Հայք
(Խալք), մեծ եւ փոքր լոոի, Զիրանի-

Սղբջակ լեռները կոչ ու մ են նոյնակես Քըրլար
(քառասուն դից օժեւ. ան) եւ պաշտուում են ընթիկերեց :
Որոնց Քըրլատափորի վանքը (Կոփէս առ-ի ափին) մի ժամա-
նակ հերթական տաճար է եղել Քառանից նույիրուած :

2 Գիւ Ը Անահիտիք գեղը — աւերակներով, Վարդեհիքի նման իր բազմալիքի ջաներով եւ խորխոր ձորերով առաջանած է եղել Անահիտին: Այս ձորերում ջաներու ընթանելու ժամանակամատ են:

(Ծիրանի), Աշուկա, Զինչէ, Կարսեաշմագ, Քսանիքա, Եալբախսի, Խարդիշ, Մանում է Սիւնուր գաշտը, անցնելով Խանձաւերակ, Թումլիս, Չուրակ (Չորակ) գեղերը ընդունում է Սիւնուր առուն, որն անցնում է Սիւնուր գեղից :

Չորողմա 5973 ստք լեռներից գեղպէհի հիւսիս
արեւելք է ուզդուած իր ընթացքով Պուլուր
(Բլուր) սոսուակը, սրբ սոսոգում է Եագու-
րաբդալ, Զորոգմա, Կիպիդի, Մացրա (Մէ-
զրէ), Պուլուր, Խմիլո, Էզնի, Զիբրէ, Վա-
րուշա, Էժմատի Կամ Էրմատի, Փոսուզ, Քե-
լալբիւր, Ուրէն-Շէնէր¹, Կիթրար գեղերի
Հանդերը. ապա մտնում է Սիւնուր գաշտը
և մհանում է Սիւնուր առուին:

Վալուկ լեռներից դէպի արեւելք ուղ-
ղուած իջնում է Կալա առ-ը, որը ընդունում
է բազմաթիւ առուներ և սոսում է Զիլ,
(Զեօլ.) Կըլլչօրէն, Գէյլիք, Գոնդոլաս,
Սիմֆիր և Կադրաֆ գեղերի հանդերը:

Զիարէթ լեռներից իջնում է հիւսիսից-
Հարաւ Բալախոս առ-ը եւ սոսպում է Կիլ-
յան, Երմենէ և Բալախոս գեղերը, միա-
նում է Հնդի, Լոտի Պուլուր, Կալասու առու-
ներին, ուղղուում է արեւելք սոսպելով Քոլ,
Ուստիկ-Օճախի, Կիլյսան, Վալիշն-Արմու-
տի և Մենզէ գեղերը: Դէպի արեւելք ուղ-
ղուելով Բալախոս գետը ձախից Զիարէթ
լ-ըից իջած էրքէնիս² առուակն է Ծնդունում,
որը սոսպում է Էրքէնիս (Արքունիս), Խան-
եադուր, Զիփրլիկ, Տորոնդանոս, Խարդիշ
և միանալով Բալախոսին՝ սոսպում էն
Մեծ և Փոքր Կարզի, Նիֆ, և Վագանդա-
գեղերը: Առաջ գնալով Պաշտում անցնում է
սոսպելով Պինտոնիքուզ, Կաստախ, Մալիկ-
գեղերը: Սագանիու լեռներից իջնում է Խան-

1. Ուրեն - ՀԵՀԵՔՔ մի աւերակ աւ անի, կամ նշանակատառեղին է նմանում, ունի աւերակներ եւ ասձարի որդիներ, որոնք պէտք է պէղուին, որ հնար լինի յոռութափար կազմելու հնչպէս Յաւրէն - ՀԵՀԵՔՔ, այսպէտ ու ՀԵՀԵՔՔ շատ հին անծեալ ու նին ու միայն անունով աւերակների լարքերով:

2. Բալախոսի տւազանի ինսուլինը՝ շաբաթական մասնակի գործությունների մասնակի գործությունները չեն աւանդական, նոյն իսկ խարդական են Համբայական մասնակի մասնակի գործությունները են, ինչու լուս Սելջուկ Թաթօնների եւ Օսմաննեանների շվահանում, մասնաւանդ Խալվամ Հոգեւորականութեան մը քաղցուզակ շառաւանք, գործությունների գործի գործի եւ գործ անունները եղծուեւ լուսիոնների առաջանաւութեան մասնակի գործությունները են, ոսկացն 80% մէջ մասնամբ պահպանեւ են իրենց ասիստական անունները՝ Ահա 60 տարի եւ որ Օսմանները խարթերդի անունը փոխել — Մամուրեթ - ուլ - աղջ են նշանակել, բայց ժողովուրդը միւս եւ հին անունն է Գործածել: Կիկոլս Ացարք Գիւրմուն անունը փոխեց եւ կոչ անու ամբ Աւեքոսն գրապալ գրեց, բայց բնակութիւնը չնացաւ Գիւրմին:

Զուր առուսակը հիւսիսից-հարաւ, ձախից
խառնուում է Բալախոռնին, իր լնդացքում
ոռոգելով Տարգետի, Աշուր եւ Զուրմալանց
գեղերը:

Սարսի-Կլյայ լը-ից գէպի հարաւ են
իջնում եւ Բալախոռի գտակին են միանում
Զինջուլ (Զինջ ջուր կամ ձենջուր) առ-ը իր
բազմաթիւ առողջերով, որոնք ոսոգում են
Վարդանց, Զինջուլ, Յրդանը, Կիւտ-
կիւնէ, Զուլովանց, Խաւենց (Հաւենց),
Զուրմավանց, Խարդ, Խանջուր, Արտուս,
Աբրամիս, Կորնջուր գեղերը:

Կարագաղ լիոներից իջնում են կունու,
Հնաս առուակները, ոռոգում են համանուն
գեղերը և խառնում ձորոխին ձախից,
Իշխոնս առուակի դիմաց, որոնք կազմում
են Սպերի և Բայրութի սահմաները: Բա-
րախոսի խառնունքը ձորոխին 5800' բար-
ձրութիւն ունի:

Բալախոսի դաշտը 6Լ.—12Եր. կիլոմետր
տարածութիւն ունի, իսկ Սենուսի դաշտը
4Լ.—10Եր. ունի, որոնք լաւ մշակում են եւ
երկրագործութեան հացահատիկների ցանքի
յարմար խիստ բարեբեր հողեր ունին: Բա-
րախոսը իր դաշտերով, սարալանջերով ա-
ւելի նման է Բարձր-Հայքին եւ Տարուրե-
րանին. Ժողովուրդն աւելի հացահատիկ է
մշակում եւ գութան ու սայլ տարածուած-
են: Ընդհանրապէս ժողովրդի տնտեսականն
ընկած է, բայց Բալախոսի բնակչութիւնն
աւելի լաւ վիճակ ունի քան թէ Հովտիկում:
Թաթար և Օսմանեան իշխանութեան թու-
լութեան, նոյն իսկ բացակայութեան պատ-
ճառով ժողովուրդը անխնայ կոտորել է ան-
տառները, տեղանք աննշան մացառեր ու-
նին, որոնք խսպան անհետանալու վրայ են:
Բալախոսի դաշտում կան աննշան այգիներ
եւ պտղառու ծառեր, բայց Ճորտիկի միւս մա-
սերի անտառային հարստութիւնից զուրկ է:

Բալախոռի հովառում նոյնպէս բնակչութիւնը բնիկէ, հին կարծագլուխ ազգարնակութիւնն է, թուրք լեզուն եւ իսլամն ընդունած, բայց Բալախոռում բացակայում է ոստանիկ, սպահ կամ ազատական դասը, աւելի մացրայաբնակ երկրագործ ժողովուրդը է, կրօնը փոխած : Այդեպահնութիւնն ու որսորդութիւնը այստեղ չեն փայլուն, գլխաւորաբար ուանչպար են, հացահատիկ ցանու երկրագործութեան, արօրին ստրկացած է բնակչութիւնը, վարուցանքը կարգին կատարում է, բայց արհեստաւորներ չունին :

առաջ հրաւիրում էին Բայրուրդից եւ Կարսոյ սաղից. իսկ այժմ, արհեստաւորի կարեքը նրանց տանջում է: Բալախոռի գիւղացին իր արօրին պատկանեալ բոլոր իրերը վայանձար սարքում է. բայց ուրիշ գործերի խելքը չի հասնում:

Մինչեւ ընդհանուր պատերազմ Հայերը շարունակում էին պահպանել իրենց գոյութիւնը հետեւեալ գիւղերը Բլուր, Բլրակ, Բալախոռ, Կրչի (Քրչի), Էրենիս, Թումնա, Խնձաւերակ, Ճնդի, Սարաչի, Զուրմավանց, Վարդահան, Քարաւերակ, Քանիքա, Քրիստի (Քրիստափոր), Վանի, Խայէֆ, Ուստիկ (Օձտեղ), Կոպիս (Խուրս):

Բալախոռի հայութիւնը սոսկալի փորձութիւններից եւ գաղթերից ու պահնդիսութիւններից, եթէ պահել էր իր գոյութիւնը գաւառի ազգաբնակութեան մի երրորդի չափ ($\frac{1}{3}$), դա նշանակում է, որ նա բարոյական մեծ ոյժ է ունեցել տոկալու մինչեւ քաններորդ դարը:

Թուրքական կառավարութիւնը հոգտիկը, Բայրուրդը եւ Բալախոռը միացրած մի գաւառ է (սանջակ) համարում:

Լեճիմական:

ԱՏՐՈՒՏ

(Շարունակելի):



ՄԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

LEHMANN-HAUPT C. F., Armenia einst und jetzt. Reisen und Forschungen. II. Band, I. Hälfte. Das türkische Ost-Armenien. In Nord-Assyrien. Mit 132 Abbildungen und 2 Tafeln. Berlin, B. Behrs Verlag Friedrich Feddersen, 1926, 8°, S. XII+450+21.

Ա.

Առաջին հատորին հրատարակութենէն յիսոյ այնչափ անհամբերութեամբ սպասուած երկրորդ հատորը վերջապէս այժմ ուրախութեամբ մեր առջեւ ունինք, բայց յապահման տարիներու թուրին աճման համեմատ գործիս ծաւան ալ աճած ըլլարդ, թէ՛ հեղինակն եւ թէ՛ հրատարակիչը յարմար գատած են Բ. Հատորն երկու մասի բաժնեւ, եւ ինք իր մէջ ամբողջութեամբ:

Միւն կազմող, արդէն պատրաստ, առաջին մասն հանրութեան յանձնել, իսկ երկրորդը, որ այս սքանչելի գործին պասկը պիտի կազմէ, ցանկի եւ անդրագոյն ծանօթութիւններու պատճառաւ առաջին առթիւ հրատարակ հանել: Մերովսանն մաղթելով որ այդ ամենահետաքրքրական մասն, ուր Խաղաղեաց ծագման ու քաղաքակրթութեան մասին պիտի խօսի, վաղ ընդ փոյթ լոյս տեսնէ խոստացուած աշխարհագրական քարտէսով. այժմ ջանանք առաջիկայ մասը ծանօթացնել «Հանդէս»ի ընթերցողներուն:

Ինչպէս առաջին՝ նոյնպէս երկրորդ հատորին բովանդակութիւնը մասամբ մեղի ծանօթ էր հեղինակին եւ Բելքի զանազան թերթերումէջ զրած յօլուածներէն, որոնցմէ մաս մը թարգմանուած են Հայերէնի ՀԱ. մէջ (Հմմտ. ՀԱ. 1899, էջ 281, 1900, էջ 65, 215, 243, 287, 335, 1902, էջ 233, 1903, էջ 321, 1904, էջ 65, 1907, էջ 21): Լեմանի եւ Բելքի գործերու ամփոփի ցանկը տուած է Հ. Պ. Ֆէրհաթեան (Հմմտ. Յուցակ Երովական-Հայկական հրատարակութեանց ՀԱ. 1913, էջ 383, 447): Լեման-Հատուպտ այս գործիս մէջ ոչ միայն ցիր ու ցան տեղեկութիւններն ի մի ամփոփած է այլ նաև մանրամասն նկարագրած է պատմական այն վայրերը, ուր կարող եղած են այցելել, պարզած եւ ճարտարօրէն մեկնած րովանդակութիւնն այն պատմական հնաւանդ յիշատակարաններուն, զոր յաջողած են ձեռք ձգել կամ ուսումնասիրել:

Առաջին հատորը կը կազմէր ա. եւ բ. զիրքը, իսկ ա'յս՝ գ. եւ դ. ը. երրորդ գրքով 17—24. գլուխը, էջ 3—224 կը ներկայացնէ Արեւելեան Թրքահայաստանը, իսկ չորրորդ 25—28. գլ. էջ 225—450 Հիւսիսյին Ասորեստան, մասցած 1—20 էջներ կարեւոր դիտազութիւններ ու ծանօթութիւններ կը պարունակին:

Ժէ. գլ. դէպի վան: Խաղաղեաց երրեմնի մայրաքաղաքին եւ անոր մերձաւոր եւ հեռաւոր վայրերուն նկարագրութիւնն ու խուզարկութիւններն հեղինակին ծրագրին համեմատ (Ա. Հատր. էջ 30) վերապահուած էր Բ. Հատորին, իրենց ուղեգրութիւնն հասցուցած էր Լեման-Հատուպտ թրքական սահմանը՝ Ս. Բարթողիմէոսի Հայոց վանքը, որուն հնագարեան զեղեցիկ եկեղեցին առաջի մասամբ կործանած կը դանեն: Այս